

ՕԴԵՐԵՎՈՒԹՅՈՒՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ԿԱՆԱԳՈՒՇԱԿՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ  
ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անանիա Շիրակացու «ափեղերագիտական» կոչվող ահքստերում բազմաթիվ ավյաններ կան երկրի մինոլորտի վերաբերյալ Այդպիսիք են «Մնացորդը բանից» շարքի [1] «Յաղագս երկնի» [էջ 34—37], «Յաղագս որ ի մեջ երկնի և երկրի շարժմունք» [44—48] և «Յաղագս արեգական» [54—62] հատվածները:

Մինոլորտում աեղի ունեցող երևույթների և հատկապես եղանակի կախագուշակման նշաններին է նվիրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատությունը, որն իր բովանդակությամբ առնչվում է վերոհիշյալների հետ և նախորդել է նրանց: «Տիեզերագիտության» մեջ երկնային երևույթներին նվիրված բաժնում խոսվում է անձրևի, մառախոսովի («մըշտուշ»), որոտի, ձյան, կարկուտի և բամու ծագման մասին [2, էջ 120—125]: Բերվող բացատրություններն ուղղակի կապ ունեն «Յաղագս ամպոցի» հետ:

Այս աշխատությունը համեմատաբար ուշ է հայտնարերվել՝ 1896 թ., Գ. Տ. Մկրտչյանի կողմից, մի ձեռագրի մեջ, որը կրում է հայոց Ն. Լ. /=981/ թվականը\*: Բահասմիրությունը հաճախ է անդրադարձել այդ տերստի քննությանը: Գ. Տ. Մկրտչյանը [3], Ա. Գ. Արրահամյանը [2, 4, 5] և Գ. Վ. Արգարյանը [6], «Յաղագս ամպոցը» աներկրայորեն վերագրում են Շիրակացուն, ըստ որում Գ. Տ. Մկրտչյանն այն համարել է Շիրակացու կատարած թարգմանություն: Այս վերջին ենթադրությունը համեմատաբար նորերս (1964 թ.) էռնկրետացրել է Հ. Մ. Բարթիկյանը, գտնելով, որ «Յաղագս ամպոցը» հանդիսանում է կիւկիւան հույն բանաստեղծ Արատոս Սոլացու (ծնված մ.թ.ա. IV դ. վերջին) Diosemia կամ Prognostica աշխատության հայացումը: Հ. Բարթիկյանի հոգվածում [7] զուգահեռաբար տրված են Արատոսի հունարեն և «Շիրակացուն վերագրվող» հայերեն տերստերը և շեշտված են նրանց նմանությունները (տարբերություններն անտեսված են):

\* Ներկայումս Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2679 ձեռագիր:

Բարթիկյանի տեսակետը հանգամանորեն քննադատել է Դ. Վ. Աբգարյանը [6, էջ 77—94], որը սակայն, իր հերթին, «Յաղագս ամպոցը» համարում է այլ հեղինակների՝ Եվդոքս Կնիդոսցու (մ.թ.ա. IV դ.) և Բարսեղ Կեսարացու (մ.թ.ա. IV դ.) օդերևութաբանական տեքստերի հայերեն թարգմանություն, կամ նրանց առանձին մասերից մի անհայտ հայ հեղինակի կազմած ժողովածու Կարծում ենք Եվդոքս Կնիդոսցու վերաբերյալ ենթադրությունն առարկայագուրկ է, քանի որ նրանից ոչ մի գրվածք չի պահպանվել, որի հետ այսօր կարելի լիներ համեմատել «Յաղագս ամպոցը», իսկ Բարսեղ Կեսարացին, լինելով ուշ շըրջանի հեղինակ, կարող էր օգտված լինել նույն հին աղբյուրներից, ինչ և Շիրակացին: Դժվար է հավատալ, թե «Ճողովածուն» այդպիսի հմտությամբ կազմող անձնավորությունը անհայտ ու անհիշատակ մեկը եղած լիներ: Զէ որ խոսքը «զուտ գիտական» «իր տեսակի մեջ գրեթե միակ մի գրվածքի» մասին է [3], որը «Հիրավի բացառիկ հուշարձան» է անվանում նաև Արգարյանը [6, էջ 89]: Եվ Արգարյանն, իրավացիութեն, այդպիսի գործ ստեղծելու ընդունակ մի «առավել հարմար գիտնական» համարում է Անանիա Շիրակացուն: բայց ինքը ևս «Հայ մեծ հանրագետին» ի վերջո հատկացնում է սոսկ թարգմանչի դեր:

Մեր խնդրից վեր համարելով հարցի աղբյուրագիտական կողմի քննությունը, նշենք միայն, թե՝ ա) Հ. Բարթիկյանը սխալմամբ է Արատու Սոլացու հեղինակությունը համարում մի աշխատանք, որը, ինչպես հետո կտեսնենք, նրանից առնվազն կես դար առաջ է ստեղծվել, բ) թե «Յաղագս ամպոցը» իր բովանդակությամբ կապված է «Մնացորդք բանից» շարքի հետ և նախորդել է վերջինիս: Հենց սրա էջերում էլ այդ մասին կա պարզորոշ վկայություն՝ «Մեկնութիւն նշանաց եղև առաջին բանիւրդ» [1, էջ 56], խոսքն անկասկած վերաբերում է «Յաղագս ամպոցին», որով և հավաստվում է նրա նկատմամբ Շիրակացու հեղինակացին իրավունքը, և գ) թե Շիրակացին հունական աղբյուրներին քաջածանոթ լինելով հանդերձ տարրերություն է դրել իր և օտար հեղինակների գրածների միջև. նա ընթերցողներին ասում է՝ «... զոր և ես ձեզ նկատեմ գրել զդիւրինս, և ոչ դժոխահասանելիս՝ որպես զարտաքնոցն» [3, էջ 12], որ նշանակում է, թե նա ինքն է գրել (և ոչ թե թարգմանել), աշխատելով խոսել մատչելի, և ոչ թե «գժոխահասանելի» ոճով, ինչպես «արտաքին» (օտար) հեղինակները:

Ուրեմն «Յաղագս ամպոցը» ոչ թե թարգմանություն, այլ ինքնուրույն տեքստ է: Ի՞շարկե, նրա մեջ կան հույն հեղինակներից վերցրած «նշաններ», բայց այն ոչ թե ժողովածու է, այլ ամբողջական գործ, որ ոմի միասնական կոնցեպցիա և հատուկ ուղղվածություն: Անանիա Շիրակացու ժառանգության ականավոր հետազոտողներ Ա. Գ. Արքահամ-

յանը և Գ. Բ. Փետրոսյանը՝ նրա աշխատությունների մասին գրել են. «Զի կարելի ժխտել, որ Շիրակացին օգավել է առաջավոր անտեկ զիտականների աշխատություններից, և նա այդ չի թարցնում։ Կարեորը տվյալ դիմքում այն է, որ հայ մատծովը VII դարում առաջադրել է զիտական այնպիսի հարցեր, այնպիսի հիպոթեզներ, որոնք Արևմտյան Եվրոպայում զիտության մեջ քննության նյութ են դառնում միայն ոչ միջնադարում» [2, էջ 22]։ Այդպիսի աշխատություն է նաև «Յաղագս ամպոցը»։

Այս աշխատությունը Գ. Տ. Մկրտչյանն անվանում է «դուտ զիտական գրվածք, բոլորովին պատասխան-ախտաբական տարրերից»։ Նրան ժամանակակից և նույնիսկ ոչ միջնադարի աղբյուրներից շատերը լի են միամիտ և սնուապաշտական բնույթի գուշակություններով, որոնք զիտական կանխատեսումների հետ ոչ մի կապ չունեն։ Այս գրանցից մի քանի օրինակ, «ի հոռի (ամսինն), եթե լուսինն խաւարի ելանե թագաւոր մի յարեկից և առնե արին՞եղութիւն» կամ «... Յորժամ աստղ ցողանա յարեկից յարեմուտա՞ թագաւորն պարսից և խուաց («) պատերազմին...» կամ «...իթի ի շորբորդ աւրն զրադմատեղն\* զնդակ տեսանես՝ զորացն պարսից մեծ շարժում լինի, ապա թե ճապաղ՝ պարսից նուազութիւն և հայոց բարձրութիւն» [3, էջ 4] և այլն։

Սույն հոգվածում մենք փորձում ենք պարզել Անանիա Շիրակացու աշխատություններում հանդիպող օդերեսութարանական տվյալների զիտական ու պատմական նշանակությունը և, մասնավորապես, «Յաղագս ամպոցի» տեղը մեր միջնադարյան զիտության մեջ։ Այս աշխատությունում Շիրակացին, մեկնարանում է եղանակի կանխագուշակման 80-ից ավելի նշան, որոնց մի զգալի մասը կրում է տեղական բնույթ։ Երեսում է, որ հեղինակն ինքը պարբերաբար դիտել է օրական կամ համեմատաբար ոչ շատ երկար ժամկետներում (երկու—երեք օրվա ընթացքում) նղանակի մեջ կատարվող փոփոխությունները և արձանագրել դրանց նախորդող երեսույթները, ինչպես նաև ծանոթացել է ծողովորդի մեջ տարածված կանխագուշակություններին։ Նա զիտումներով կարող էր գրադարձել թե ուսումնառության տարիներին, Տրապիզոնում, և թե, մանավանդ, ուսումն ավարտելուց և հայրենիք վերադառնալուց հետո, երբ ձեռք բերած զիտելիքների շնորհիվ կարող էր ավելի զննողական վերաբերմունք հանդես բերել բնության երեսույթների նկատմամբ, դրանք համադրել, համեմատել և օրինաշափություններ բացահայտել։

Շիրակացին գտնում է, թե բնական ընթացքով կատարվող երեսույթ-

\* Բազմաստեղն—կամ Պլեադա՝ գալակտիկական ցրված աստղակույտ է ծովի համաստեղությունում։

Ները գիտությունն ի վիճակի է կանխատեսել, ըստ որում ոչ միայն տարվա և ամսվա, այլև շաբաթվա օրերի համար. «Իսկ որ բնական բերմամբք հրամայեցավ լինել, այնմ կարող եմք հասու լինել՝ որպես ուսաք ի բազմափորձութեանց, գիտությամբ զարդուդ, ոչ միայն ղեղանակս չորից ժամանակաց... ըստ յոլովութեան տարեաց բոլորովին, իրաքանչիր շրջապայից ոչ միայն յամս և յամիս այլև յաւուրս շաբաթու՝ զանցնիւ այստեղ օր յայտնելով...» [1, էջ 63]: Այստեղից մենք իմանում ենք նաև, որ Շիրակացին կանխագուշակման նշանները, կամ գոնե դրանց մի զգալի մասը, հայտնաբերել է «բազմափորձության», այսինքն՝ բազմաթիվ դիտումների ու փորձերի հիման վրա:

Հեղինակն ընդում է օդերևութաբանության և եղանակի կանխագուշակման գործնական խոշոր նշանակությունը: Նրա աշխատությունների ը մեկում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Եւ այսու ամենայնիւ յայտ է թե նշանք որ լինին ի լուսաւորացդ՝ ի շահ օգտութեան են երկրի: Նաւազարն զգուշացի և մի խառնիցե զնամ ի ծովն՝ այլ անդեն զետղ առեալ պահիցէ ի նաւահանգստի. զի պաշարեալ գտանիցին ի ծովուն ի շնչելոյ հողմոյն ամրոխելոյ: Եվ ճանապարհորդն զգուշացի, զի մի եւանիցե ի տանեն, և երթեալ աշխատեալ ի բքայոյդ և յանձրեաց ժամանակի» ... նույն տեղում ակնարկ է արվում նաև գյուղատնտեսության բնագավառի համար եղանակի երեսութների ուսումնասիրության նշանակության վերաբերյալ, «զի ի փոփոխմունսն որ լինի ի լուսնին անասունք զիութիմ առնեին, և տունկք օգնականութիմ գտանեն աճման սննդեանն իրեանց» [1, էջ 38]:

Մթնոլորտացին երեսութների մեջ հեղինակի ուշադրությունը առանձնապես գրավում են անձրեը, քամին, ամպերի շարժումը, մասսամբ և ցրտահարությունները, որոնք մարդկանց կյանքում՝ պյուղատնտեսության, հանապարհորդությունների (կապված առևտիր հետ), ծովագնացության համար գործնական մեծ նշանակություն ունեն:

Եղանակի տեղական նշանները բաժանվում են երկու կարգի՝ ընդհանուր, որոնք պայմանավորված են ամենուրեք գործող օրենքներով և հատուկ, որոնք կապված են տվյալ կոնկրետ վայրի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունների հետ: Շիրակացու նկարագրած նշանները, հիմնականում, պատկանում են առաջին կարգին: Դրանք, ըստ ծագման և բնույթի կարելի է ստորաբաժնել հետևյալ խմբերի. ա) երկնային լուսատուններով, բ) ամպերի և մառախուղի տեսքով, գ) երկնքի գույնով և օպտիկական երեսութներով, դ) կենդանիների, թշունների, միջատների վարքով, ե) երկրի մակերեսութի ձևերի տեսքով և զանազան այլ երեսութներով կողմնորոշող նշաններ:

Եղանակի «վատացումբ», որն արտահայտվում է քամու, ամպամածության, մթնոլորտային տեղումների առաջացմամբ, Շիրակացին անվանում է մի տերմինով՝ «յուզումն ամպոց» կամ «յուզումն աւողոց», այդպիսով ընդգծելով, որ աման էլ օդի մի վիճակն է հանդիսանում: Այն, ինչպիս ինքն է բնութագրում, թանձրանում է, թխանում, դառնում դժվարահալ, երբեմն էլ հաջում, խանձրում է, մերթ կանաչում և այլն:

Հեղինակն առանձին կարևորություն է տալիս այն նշաններին, որոնք կապված են երկնային լուսատուների հետ. շատ էական է համարփում, մտսնավորապես, Արեգակի և Լուսնի տեսքը՝ գույնը, պալմառությունը, պսակը, երանգները, շրջապատի հստակության աստիճանը, Միր Կաթինի ու աստղերի տեսանելիության և առկայժման ուժգնությունը և այլն: Նա գրում է. «Յոյժ պիտոյ են մարզիան նշանք, որ լինին լուսաւորացդ..., ... զի որ միտ եղեալ ընարեսցի զգեղեցիկ փորձ նոցա և ... (նորա) բազում անգամ վարդապետք լինեն մեզ օդոյն պղտորութեան և դառնաշունչ սառնամանհաց» [1, էջ 48]:

Բնութագրելով Արեգակի միջոցով մրոշվող նշանները հեղինակը եղանակի վատացման ահազանգ է նկատում լուսատուի աղոտությունը, նրա շուրջը «մլարով» պատելը, արևածագի պահին երկնքի խալտաբղետ երանգները, կամ ամպամածությունը, թուխ ամպերով պարուրվածությունը, իսկ պարզ երկնքի գեղեցում՝ «արնանման» հրացոլքը: Վատ եղանակ է սպասվում նաև այն դեպքում, երբ ցերեկը տաք է և արել «հուր է տեղում», իսկ երեկոյան, պարզ երկնքի պաշմաններում ճառագայթները «թրթում են»: Անամպ և անհողմ եղանակ են ավետում Արեգակի սկավառակի մաքրությունը և նրա շրջապատի երկնքի պարզությունը, ծագման պահին սովորականից մեծ և «ալեկոծված» ճառագայթներով երևալը, ապա, երկնակամարով վեր բարձրանալիս՝ հետրդհետ փոքրանալը, անամպ կամ շիկագույն ամպերով մայրամուտը, ձմռանը մայրամուտի պահին դեղին գույն ունենալը և այլն [3, էջ 36]:

Հայտնի է, որ կուսնի փուլերի միջոցով եղանակի կանխագուշակումներն ունեն բազմադարյան ավանդույթ: Կուսնի նորելու հետ կապում էին անձրեստ եղանակները, կուսնի բառորդի հետ՝ պարզ եղանակի գերակշռությունը, լիալուսինը համարվում էր զլիսավորապես անհողմության նշան և այլն: Ռուսական ժողովրդական ավանդույթներում, օրինակ, նշվում է, թե կուսնի նորելուց երեք օր առաջ միշտ լինում է եղանակի փոփոխություն, նորալուսնի հինգերորդ օրը միշտ ուժեղ քամի է, երբ նորալուսինը «կանգնած» է լինում եղջրուրի վրա՝ մոտալուտ անձրեսի նշան է և այլն:

Լուսինն ըստ Շիրակացու, եղանակի կանխանշան է հանդիսանում ոչ թե անմիջապես ինքնին կամ իր փուլերով: «Յաղագս ամպոց»-ում

Երկրի արբանյակը հանդես է գալիս սոսկ իրու լուսի աղբյուր, որի տեսքը, պայծառությունը և գույնը փոփոխվում են նայած Երկիրը շըրշապատող մթնոլորտի վիճակին, այն բանին, թե կա՞ն արդյոք օդի մեջ գոլորշիներ, ամպեր, մառախուզ, ի՞նչ ուղղություններով են դրանք շարժվում և ի՞նչ թանձրություն ունեն: Դրա համեմատ էլ մենք կուտինը տեսնում ենք մերթ աղոտ կամ շիկագույն, բոսորագույն, երբեմն «բակով» շրջապատված և այլն: Հետևապես, կուսնի ձեզ, գույնը, բակը, Երկրի մթնոլորտի վիճակի արտահայտություններն են և կարող են հիմք ծառայել մոտակա ժամերի կամ օրվա (կամ օրերի) և դանակի կանխագուշակման համար:

Աշխատության մեջ ձիշտ է, բավականին շատ է խոսվում կուսնի տարրեր փուլերի, հատկապես նորալուսնի մասին, սակայն միշտ էլ օդի վիճակի կապակցությամբ: Նշելով, որ երբեմն նորալուսնի եղջյուրները երևում են բթացած, որը նշան է արևմտյան հողմի կամ անձրկի, Շիրակացին բացատրում է, թե «մթագնած օդն է», որ կուսնի եղջյուրները այդպես է ցուց տալիս: Այստեղից պարզ է դառնում նշանի իմաստը՝ եղանակի վատացում՝ «յուզումն աւղոց և ամպոց»:

Եվ, իրոք, ներկայումս հաստատված է [8, էջ 72], որ լուսինը չի կարող եղանակի փոփոխություններ առաջացնել, քանի որ ինքն էլ է իր լույսն ստանում Արեգակից և անզոր է վերջինիս նման տաքացնելու երկրի մակերևույթը, ջուրը գոլորշացնելու, ամպամածություն, տեղումներ, քամիներ առաջացնելու և այլն: Ինչ վերաբերում է մակընթացություններին ու տեղատվություններին, ապա դրանք, թեպետ կուսնի ներգործությամբ են առաջանում, բայց որևէ ազդեցություն չեն գործում եղանակի վրա՝ կրկին իրենց էներգիայի անբավարարության պատճառով: Ուստի օրվա ընթացքում եղանակի փոփոխությունները զուրկ են այն կանոնավոր հաջորդականությունից որպիսին հատուկ է օվկիանոսի ու ծովերի մակընթացային շարժումներին:

Աշխատության մեջ մի քանի նշաններ էլ վերաբերում են աստղերին: Այսպես, եթե Սիր Կաթինը սպիտակում է, նշանակում է քամի պետք է փլի այն կողմից, որտեղից սկսել է սպիտակելը: Երկնակամարի որևէ մասում աստղերի մլարով պատելը կանխանշան է ամպերի «հուզումների» և այլն [3, էջ 37]:

Ամպերը և ամպամածությունը ըստ հեղինակի հանդիսանում են օրվա եղանակի բնորոշ տարրերը և միաժամանակ եղանակի մոտալուտ փոփոխության վատահելի նշաններ: Եթե երկնակամարը ամպերով ծածկվում է, ավելի որոշակիորեն կարելի է կանխագուշակել մթնոլորտային տեղումներ՝ մոտակա ժամերի կամ նույնիսկ րոպեների ընթացքում: Կանխագուշակումն, իհարկե, ավելի մեծ հավանականություն

կստանա, ևթե հաշվի առնվեն նաև այլ նշաններու Շիրակացին գիտե, որ ամպերը բաղկացած են ջրային գոլորշիններից կամ մանրազույն կաթիլներից. նա հաշվի է առնում ամպերի գույնը, թանձրությունը, «Հյութը»՝ այսինքն՝ խոնավության չափը և ամպերը տարրերում է ըստ արտաքին տեսքի և գույնի՝ չափավոր, նոսր, թանձր, գեղմի նման պատիղովն (թանձր ամպի տեսակ), թոխ, շիկազույն, կամ խարտյաշ, արնանման և այլն:

Յուրաքանչյուր տեսքի ամպեր օրիվա տարրեր պահերին և որոշակի պայմաններում, ըստ Շիրակացու, կանխանշում են առանձին եղանակ:

Հայանի է, սակայն, որ երբեմն միննույն տիպի ամպերից կարող է տեղալ անձրեն կամ կարկուտ, կամ բոլորովին ոչինչ չտեղալ, որով և միայն արտաքին տեսքի հիման վրա կատարված կանխագուշակումը չի արդարանաւ Հետեւապիս պետք է դիտել, նաև, թե ինչ է կատարվում ամպերի հետ, ինչպես են նրանք փոփոխվում, կուտակվում և նույնիսկ՝ ինչպես են ցրվում [9, էջ 81]: Եվ հետաքրքիր է, որ մենք Շիրակացու մոտ տեսնում ենք հենց այդպիսի մոտեցում: Այսպես, ևթե կուտինը պատաժ է մառախուզով, ապա ըստ Շիրակացու դա նշանակում է, որ լուսատուն երեսում է «զյուրահալ» օդի միջով և եղանակը պետք է պարզի: Իսկ ևթե թիւ հետո մառախուզը նորից է զուանում և խտանում է, ապա նշանակում է, որ օդը թանձր է, խոնավությամբ ծանրաբեռնված և պետք է սպասել ամպամածության, «վասն զի կրկնումն այս մլարի թանձրութիւնն է հիմոց աւգոյն եղե» [3, էջ 32]:

Շիրակացին խիստ վատ եղանակի նշան համարում է թանձր (խիտ) ամպերը. երբ «պատիղովն» ամպերը մոտենում են Արեգակին, սպավում է ձմեռային եղանակ. անկասկած այդ նշանակում է ցրտահարություն կամ սառնամանիք, որը Հայկական լեռնաշխարհում գարնան և աշնան ամիսներին երբեմն կրկնվող և բավկանին վնաս հասցնող երեսով է: Երբ արեն «ընթանում է մի ամպից դեպի մլուսը» (իրականում՝ երբ ամպերը շարժվում են մերի ընդ մերի ծածկելով լուսատուին), նշանակում է ամպերը պետք է թանձրանան և եղանակը դառնա, ինչպես ինքն է ասում՝ հուզումնալից: Սակայն միաժամանակ, ըստ Շիրակացու, նոսր ամպերն էլ կարող են նախորդել եղանակի վատացմանը՝ երբ Արեգակի ծագելուց առաջ լինում է չափավոր և նոսր ամպ, և Արեգակը վարագուրված այդ ամպի միջով շարժվում է «տիսուր» ճառագալթներով՝ «այնպես զի լոկ բոլորն երեսնցի»: Այդ հաստատվում է նաև ժամանակակից օգերենության գիտական տվյալներով, այսինքն՝ շատ բարձր և նոսր փետրավոր ու փետրաշերտավլոր ամպերը համարվում են խոնավաբեր օդային. զանգվածների, մասնավորապես ցիկլոնային համակարգերի մոտենալու նշան: Երկնակամարի արևմտյան մա-

սում ամպերի երկալը մեծ մասամբ ժառայում է իրրե հողմոտ եղանակի, ամպամածության և տեղումների կանխանշան [10, էջ 83]: Որոշակի տարրերություն է դրվում օրվա զանազան պահերի ամպամածության միջև: Երբ երկնակամարի արևմտյան մասում երեկոյան հայտնըվում են թանձր, կարմրավուն եզրերով մեծաքանակ ամպեր, հաջորդ օրն սկսվում է եղանակի վատացում: այդպիսի նշան գտնում ենք նաև «Յաղագս ամպոցի»-ի մեջ [3, էջ 35]:

Երկների գույնը, հատկապես արշալույսի և վերջալույսի երանգները նույնպես արտահայտում են մթնոլորտի վիճակը, նրա՝ խոնավությամբ հագեցված լինելու աստիճանը: Գույները դասավորված են լինում սպեկտրի պատկերին համապատասխան՝ կարմիր, ծիրանագույն, դեղին, երկնագույն: Որքան մթնոլորտի խոնավությունը բարձր է, այնքան կարմիր գույնն ավելի վառ է արտահայտված, որը վկայում է խոնավարեր օդային զանգվածի ներթափանցման մասին: Այդ պատճառով վառ կարմիր և ծիրանագույն հրացոլքի դեպքում, որը լինում է արևմուտքից ցիկլոնների մոտենալու ժամանակ պետք է սպասել խոնավ, խիստ հողմոտ եղանակ [11, էջ 142]: Վերջալույսի վառ դեղնագույն, ինչպես նաև ոսկեգույն և վարդագույն երանգները, ընդհակառակը, ցույց են տալիս օդի աննշան խոնավությունը և նախանշան են չոր, հաճախ հողմային եղանակի: Ժամանակ առ ժամանակ Արեգակը կամ Լուսինը երևում են երկու (կամ ավելի): Հրանների ներսում: Այդ շրջանները (կամ հալոները) առաջանում են այն բանի հետեւանքով, որ լույսն անցնում է մթնոլորտի վերին շերտերում գտնվող փետրավոր և փետրաշերտավոր ամպերի միջով, որոնք բաղկացած են սառցաբյուրեղներից: Որոշ դեպքերում այդ ամպերը դեռևս չեն երևում, և, հետեւապես, վատ եղանակի, ցրտահարությունների, իսկ երբեմն ձմռանն ուժեղ սառնամանիքների մոտենալը կարելի է կանխագուշակել հալոնների միջոցով [12, էջ 50]: Լուսատունների շուրջը հաճախ դիտվում է նաև պսակ՝ լուսավոր օդակ, որը ներքին եղրով ընդհուպ կպած է Արեգակին կամ Լուսին, իսկ արտաքին եղրը կարմիր է: Պսակն առաջանում է այն ժամանակ, երբ լուսատուի ճառագայթները բեկվում են ավելի ցածր ամպերի ջրի կաթիլների մեջ [13, էջ 55]: Եթե պսակը փոքրանում է, նշանակում է ամպերի մեջ ջրի կաթիլները մեծանում են և, հետեւաբար, պետք է սպասել մթնոլորտային տեղումների: Եվ, ընդհակառակն, եթե պսակը մեծանում է, ուրեմն ջրի կաթիլները փոքրանում են և մթնոլորտային տեղումներ չեն լինի [11, էջ 134]:

Երկնքի գույների և օպտիկական վերոհիշյալ երևույթների վերաբերյալ բավականին թվով նշանների հանդիպում ենք նաև Ծիրակացումոտ: Նա գտնում է, որ եթե երկինքը երեկոյան կարմիր է՝ հաջորդ օրը

պարզ կլինի, եթե առավոտայան է կարմիր՝ սպասվում է անձրեւ եթև Արեգակի շուրջը գտնիներ կան ապա եթերաւմ (այսինքն Արեգակից օներեած դանվող ոլորտառմ՝ մթնոլորտի բարձր շերտերում) ամպեր են առաջացել, եթե Արեգակի շուրջը այլ ուրիշակներք են երես, նշանակում է հոգմային հղանակ կլինի [5, էջ 319]:

Արխատանելից և այլ հույս հեղինակներից Շիրակացին վերցրել է բամու տեսակների հետ հղանակի կապի վերաբերյալ ուստամբը, որը մեր օրերում կատարելագործվելով դարձել է օփերատթարանության հիմնական դրույթներից մեկը՝ Քամիները, ինչպես հայանի է, կանոնավոր հաջորդականությամբ վշտում են Միջերկրական ծովի ավագանում: Հույները վազուց էին նկատել, որ տարվա յուրաքանչյուր սեղոնում գերիշխում է նրանցից մեկը՝ «Յաղագս ամպոց»-ի մեջ հանդիպում ենք քամիների մի քանի հոմարեն անունների (գիֆլուսոս, «լիրնացի», էվրոս), բայց առավել զործածական նրա մոտ հայկական անվանումներն են:

Հանրահայտ է, որ կենդանիները, թոշունները և նույնիսկ միջատները բնապով կանխազդում են եղանակի փոփոխությունները: Ժողովուրդը հնաց ի վեր սովորել է կենդանիների վարելով կանխազդուշակել եղանակը:

Եվ, իրոք, որսի կամ արոտի գորգ գալլ, ձագերի համար կեր հայթելը և անվնաս վերագարձը մեծապես կախված են օրվա տվյալ պահի կամ գալիք ժամերի բնթացրում սպասվող եղանակից: Եղանակի խիստ փոփոխությունները կամ գրանց հետ կապված աղետալի երեւույթները (փոթորիկ, խիստ սաւամանիք, հեղեղ, ձնահյուսերի գահավիժում, երաշա, ոչ միայն խախտում են կյանքի սովորական բնթացրը, այլև անմիջական վտանգ են ստեղծում կենդանու բուն դոյլության համար [10, էջ 74]):

Ներկայումս դիտությունը պարզում է կենդանական բնադրի մի շարք ֆիզիկական աղդակների հարցը:

Շիրակացու մոտ ես գտնում եմ կենդանիների վարքին վերաբերվող շատ նշաններ: Նա գրում է. «Եթե արագիլը ծովից փախչում է, սուր ձայներ արձակելով, նշան է ամպերի հուզման. [նայ] փախուստ է տալիս կանխազդուշակելով ծովի փոթորիկը»: Այնուհետև, երբ ծովուրուները հավաքվելով տագնապալի ճիշեր են արձակում՝ նշան է անձրեւ, մանավանդ եթև ագռավներն են նշում թոշելու ժամանակ: Նշանակում է կլինի անձրեւ, կարկուտ և ամպրոպ [5, էջ 321]:

Հստ Շիրակացու, ամպամածության, հողմի, անձրեների, երբեմն ուժգին տեղատարափների, շանթի ու ամպրոպի նշաններ են համարլում, երբ կռփուկները փախուստ են տալիս անտառից, մրտիմները և սագերը

շրից ցամաք են դուրս գալիս, պապուկները ծովից դուրս են գալիս և հավաքվում իրար մոտ, ծովային և գետային թռչունները ջրին են խփվում և ճիշեր արձակում, գորտերը խմբերով հավաքվելով կուկում են, աղաղանջները («ձկնակեր թռչուններ») թևերով հարվածում են ջրին, արջառները գլուխը վեր բարձրացնելով հոտոտում են օդը, մրջյունները ձվերը հանում են բներից և ավելի բարձր անվտանգ տեղեր փոխադրում, կամ իրենք հավաքվում են պատերի մոտ, ընտանի թռչունները կտցում են իրենց փետուրները և կոնչում, ճայերը խմբերով հավաքվելով ճշում են, ճանճերը ավելի սուր են խայթում, ճայերը թռչելիս ճշում են և օդը հարվածում, արագիները իջնում են ծովի, գետերի ու լճերի մոտ (սպասելով շրից գորս եկող գորտերին և այլ որսի) [5, էջ 309]:

Խյժմ անդրադաւնանք այն հարցին, թե որքանո՞վ են ինքնուրույն Շիրակացու օդերևութարանական աշխատությունները և ի՞նչ տեղ են գրավում հայրենական ու համաշխարհային գիտության պատմության մեջ:

Շիրակացու ժամանակ Եվրոպայում օդերևութարանական հետազոտություններ չեն կատարվել և հատուկ աշխատություններ չեն գրվել (12, էջ 9—12): Օդերևութարանության վերաբերյալ հունահոոմեական բոլոր աղբյուրները ավելի վաղ ծագում ունեն և գրված են Շիրակացու աշխատություններից մինչև առաջ դար և ավելի առաջ, ուստի և մեր հեղինակի համար կարող էին ծառայել լոկ իրեն նյութ: Շիրակացին չէր կարող գրանցից որեէ մեկը վերցնել և թարգմանել: Առավել ևս նա չէր կարող թարգմանածը ներկայացնել իրեն իր հեղինակություն, քանի որ հասկանում էր գիտությունը և գնահատում էր նրա իսկական մշակներին: Հայտնի է, որ Շիրակացին հիացմունքով է խոսել իր ուսուցիչ Տյուքիկոսի մասին և, մյուս կողմից, քննադատել է մաթեմատիկոս Քրիստոսատուրին «զի ոչ ուներ զրովանդակ արուեստն այլ աստի և անտի ծայրաբաղ»:

Ճիշտ է, Շիրակացին շատ բան փոխառությամբ վերակենդանացրել է անտիկ աշխարհի գիտությունից, սակայն նրանում գերիշխում էր բնախույզի որոնող միտքը, որին չէր կարելի գոհացում տալ առանց դիտողության և փորձի: Երևույթների էության մեջ թափանցելը նա կրոնին հակառակ բան չէր համարում. նա դիտում էր երկինքը, արեգակի և լուսնի ծագումն ու մայրամուտը, ամպերի, օդի «հուզմունքը», որոշում հողմի ուղղությունները և այլն: Նա գտնում էր երկինքը, արեգակի և լուսնի ծագումն ու մայրամուտը, ամպերի, օդի «հուզմունքը», որոշում հողմի ուղղությունները և այլն: Նա գտնում էր, որ «աստծո ստեղծած» լուսատունները մարդկանց համար ծառայում են նաև իրեն նշաններ՝ եղանակի կանխագուշակման համար: Անհրաժեշտ է միայն ուսումնասիրել բնության երևույթները, չհիմնվել լոկ օտար աղբյուրների վրա,

այլ ելնել նշանների «գեղեցիկ փորձից»: Ըստ երեւյթին Հեղինակին հայտնի էր այն հանգամանքը, որ մի երկրում դիտված նշանը մի այլ երկրում կարող է մթնոլորտային նույն երեւյթի կանխադուշակման համար արդյունավետ լինել:

Թե ինչ կոնկրետ ազբյուրներից է օգտվել Շիրակացին իր նշանները կազմելու համար, այժմ դժվար չեն առել Սևիական դիտումների ու փորձի ավշաներից բացի նա իր ձեռքի տակ ունեցել է, հատկապես հունարեն ազբյուրներ, որոնցով հարուստ էր Տյուբիկոսի գրադարանը:

Ծատ դիտությունների նման օգերեսութարանությունը ևս իր ակոնքները գտնում է անտիկ աշխարհում: Հին Հույններին ծանոթ էին մթնոլորտային երեւյթների որոշ օրինաշափություններ. դրանց ուսումնամիրությամբ գրադպող դիտությունը կոչվում էր մետեորոլոգիա: Այդ բովանդակությամբ առաջին դիրքը՝ Meteorologica վերնագրով, գրել է Արքատուսելը, որ սիստեմավորել է այն ամենը, ինչ հայտնի էր իր նախորդներին, ավելացնելով սևիական տեսությունները, դիտումների և նույնիսկ փորձերի արդյունքները [12, էջ 10]:

Կլիմայի, եղանակի, մասամբ նաև վերջինիս կանխագուշակման հարցերին անդրադարձել են նաև Պլոտարքոսը, Պլինիուս Ավագը, Թեոփրաստոսը, Սելիանոսը, Արատոսը, Վերգիլիոսը, Սոփոկլեսը, Ցիցեռոնը, Պինդարոսը և այլք, որոնցից Շիրակացին օգերեսութարանական դիտելիքներ է ձեռք բերել նրա հայացքները առավել մերձավոր աղերս ունեն Թեոփրաստոսի «Բույսերի հետազոտություն» աշխատության հետ [14, էջ 85], որից և, իր ժամանակ, օգտվել է նրա կրտսեր ժամանակակից Արատոս Սոլացին:

Սակայն Անանիա Շիրակացին օգերեսութարանության հարցերը քննարկում է հին Հույն հեղինակներից բավականին տարրեր ձևով, իսկ Թեոփրաստոսի եղանակային նշանների նկատմամբ հանդես է բերում խիստ քննադատական մոտեցում: Ամենից առաջ նա հրաժարվել է զուտ հունական բնույթ կրող նշաններից, որոնք վերաբերում են Հունաստանի կոնկրետ վայրերին (Էվրեա կղզուն, Պելիոն լեռանը և այլն): Այնուհետև մերժել է բացարձակապես անհեթեթ այն եղբակացությունները, որոնք վերաբերում են թե՛ երկնային լուսատուններին, թե՛ կենդանիներին. ու թղուններին և այլ առարկաների: Այսպես, Թեոփրաստոսը եղանակների փոփոխությունը կապում է գերազանցապես տարրվա ընթացքի՝ արևադարձերի և զիշերահավասարների պահերի հետ: Պլեադի համատեղության մայրամուտից մինչև ծագումը կես տարի է, ասում է նաև, որից հետեւում է, թե ինչպիսին որ լինի մթնոլորտի վիճակը Պլեադի մայրամուտի ժամանակ, այդպես էլ կշարունակվի մնալ մինչև ձմեռային արևադարձի պահը և եթե փոփոխություն լինում է, ապա կլինի

միայն արևադարձից հետո: Խսկ երբ չի փոփոխվում, կմնա նույնը՝ մինչև գարնանային գիշերահավասարը, և այսպես շարունակ: Ցուրաքանչյուր ամիս իր հերթին բաժանվում է մասերի: Դիտումները պետք է սկսել նորալուսնից. «Փոփոխովիյունն ամենից հաճախ տեղի է ունենում շորորդ օրը, իսկ եթե ոչ՝ ութերրդ օրը, եթե այդ օրն էլ չի լինում՝ կինի լիալուսնի ժամանակ» [15, էջ 401]: Ըստ Թեոֆրաստուսի՝ ցերեկը նույնպես ունի բաժանումներ՝ արևածագ, միջնառավոտ, կեսօր, մինչ երեկո և մայրամուտ: Եղանակի փոփոխովիյուններն էլ տեղի են ունենում հենց այդ բաժանումներից որևէ մեկի ընթացքում: Այսպիսով, ոչ միայն տարվա եղանակները, այլև ամսվա և նույնիսկ օրվա (ցերեկվա) ընթացքում նկատվող եղանակները Թեոֆրաստուսը համարում է երկնային լուսատումների՝ Արեգակի կենդանակերպի տարրեր համաստեղովիյունների և մանավանդ լուսնի ներգործության հետևանք [15, էջ 394]: Շիրակացին, որ լավատեղյակ էր հին աստղագիտության նվաճումներին, գիտեր նաև տարվա եղանակների առաջացման մեխանիզմը: Սակայն մերժում է ընթացիկ եղանակի օգերենությարանական պայմանները լուսատումների շարժման փուլերից կախման մեջ տեսնելու գաղափարը և հիմնական շափանիշ ընդունում է մթնոլորտի վիճակը, որով և պայմանավորվում են նաև իրենց՝ լուսատուների տեսքը, գույնը, պայծառությունը:

Շիրակացին խորհուրդ է տալիս եղանակի ուսումնասիրության համար լուսատուները դիտել հենց այդ նշանները մեկնաբանելու նպատակով և ոչ թե հետեւ աստղաբաշխներին. «Եւ ուշիմ մտօք եթե հայցիս... բազում նշանս ոմիմք ուսանել յարեգակնէ, եթե ոչ առնուցումք զինելագարեալ խորհուրդս աստեղաբաշխիցն» [5, էջ 308]:

Թեոփրաստուսը բերում է կենդանիների վարքի հետ կապված եղանակային բազմաթիվ կանխանշաններ, որոնք նա կազմել է մասամբ իր սեփական դիտումների, և մասամբ էլ «արժանահավատ անձնավորությունների հաղորդած տեղեկությունների» հիման վրա: Այդ կանխանշանները, հեռու են գիտական հիմքից, օրինակ. «Երբ եզր լիզում է իր առջևի կճղակներ՝ փոթորկի նշան է», «Երբ ագռավը, որ սովոր է տարբեր ձայներ արձակել, դրանցից մեկը կրկնում է երկու անգամ, արագարագ՝ անձրւի նշան է», «Երբ շումը թափալվում է գետնին՝ նշան է ուժեղ քամու», «Գայլի ոռնոցը նշանակում է փոթորկի երեք օրվա մեջ», «Եթե գիշերը ճրագի պատրուզից կայծեր են թոշում՝ նշան է մոտալուտ անձրւի», «Եթե պատրուզից շուշն առաջանում է հրեղեն բոլորաձեռակ, եթե կասկարաներից կայծեր առաջանան՝ սպասվում է անձրւ» և այլն [15, էջ 431]: Այս և նման տիպի շատ նշաններից Շիրակացին հրաժարվում է: Ժամանակակից գիտությունը նույնպես գտնում է, որ

Հնարավոր չէ անվերապահորն հավատալ եղանակի կանխադռշակման բոլոր ավանդական նշաններին Գրանք բազմից ստուգել են և պարզվել է, որ 100-ից միայն 9—10 նշանը կարելի է փորրի ի շատէ վատահելի համարել Մնացած 90-ը հինավորց սնահավատությունների մնացորդ է [8, էջ 81]: Եիրակացին նույն ձևով, գեռես մեզնից 13 դար առաջ, փորձով ստուգել ու դատել է, աշխատելով պահպանել եղանակի այն նշանները, որոնք գալիս են ժողովրդի գործունեությունից և որոնք հիմնավորվում ու դիտական բացարության են գանում:

Եիրակացու նշված աշխատությունների զիմավոր արժանիքն այն է, որ նրանցում առաջին անգամ վճռականորեն դեռ են նետվում ախարքային սնուախ հավատալիքները և փորձ է արվում մթնոլորտային պրոցեսների մոտակատ փոփոխությունների նշանները ահսնել օդի ներկա վիճակի մեջ: Հենց բուն ժողովրդական նշաններն ել մեկնարանվում են այդ հիմնական տեսանկյունից:

А. А. АСЛАНЯН

## ВОПРОСЫ МЕТЕОРОЛОГИИ И ПРЕДСКАЗЫВАНИЯ ПОГОДЫ В ТРУДАХ АНАНИЯ ШИРАКАЦИ

### Р е з и ю м е

В трудах средневекового армянского ученого-математика, астронома и географа Анания Ширакаци (VII в.) имеется множество сведений и суждений о земной атмосфере и метеорологических процессах. Пять текстов специально посвящены этим вопросам и признакам предсказывания погоды. В армянской филологии эти тексты изданы и изучены в аспекте источниковедения, причем особое внимание удалено труду «Об облаках и знамениях». В настоящей статье указанные труды рассматриваются с точки зрения научной метеорологии и ее истории.

Метеорологией в античном мире занимались многие, но наиболее важными следует признать Аристотеля (IV в. до н. э.), написавшего первую в мире «Метеорологию», Теофраста (половина IV—начало III в. до н. э.), автора «Исследования о растениях» и Арате Сольского (III в. до н. э.). Вероятно их труды и использовал Ширакаци, работы которого, созданные более чем через тысячу лет после греческих ученых, отличаются от их трудов в своих основных положениях и новизной научного подхода. Ширакаци отказывается единственными причинами изменений погоды считать фазы Луны, созвездий Зодиака, видимые движе-

ния Солнца; а в качестве главного фактора выдвигает физическое состояние атмосферы, которое обуславливает цвет неба, его облачность, туманы, разнообразные оптические явления, вид и яркость светил. Эти явления и служат «знакомствиями» для предсказывания погоды за несколько суток вперед. Светила являются предвестниками погоды не сами по себе, и не своими fazами, а своим видом, наблюдаемым через земную атмосферу. Автор уверен, что наблюдения в природе и опыт дадут нам ключ к познанию воздушного океана и могут оказать важную услугу в практической жизни—для сельского хозяйства, мореходства, путешествий.

Предсказывания Ширакаци свободны от распространенных в его времена суеверий и лженаучных астрологических заблуждений. Его метеорологическое учение занимает важное место в общей исторической цепи развития этой науки.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Պատկանյան Ք., Անանիալի Շիրակունվոյ մնացորդը բանից, Պետերբուրգ, 1877:
- Արցանամյան Ա. Գ., Պետական Գ. Բ., Անանիա Շիրակացի, Երևան, 1979:
- Տեր-Մկրտչյան Գ., Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896:
- Արցանամյան Ա. Գ., Օգերեսովարանական մի քանի բնագրեր հայկական ձեռագրերում («Հայագիտական հետազոտություններ») Հ. Ա., Երևան, 1974:
- Արցանամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:
- Արգարյան Գ. Վ., Շիրակացու վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին, ՊԲՀ, 1971, № 1:
- Բագրիկյան Հ. Մ., Արամոս Սոլացու Dlosemai աշխատության հայերեն թարգմանությունը «Բանքեր Մատենագրանի», № 7, 1964:
- Гальцов А. П. Как предсказывают погоду, М., 1954.
- Дзердзегевский Б. Л. Как предсказывают погоду, М., 1949.
- Жарков С. Н. Народные приметы и предсказывание погоды, М., 1954.
- Зубков А. Е. Предсказывание погоды на море по местным признакам, М., 1964.
- Хргян А. Х. Очерки развития метеорологии, Л., 1948.
- Այվազյան Վ., Խեցես նախաենել վազվա եղանակը, Երևան, 1936:
- Ասլանյան Ա. Ա. Первый источник по метеорологии на армянском языке.—В кн.: Тезисы докладов на IV Закавказской конференции по истории науки. Ереван, 1972.
- Theophrastus, Enquiry into plants, vol. II, concerning weather signs, London, MCMXLIX.